ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

12. Հուլիսի 2012 թ. գ. ԾԻԱԾԱՆ

Հարգելի համագյուղացիներ, հյուրեր, պարոն Աբրահամյան, Ձեզ եմ ներկայացնում 2012 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքները:

Գյուղապետարանը իր գործունեությունը իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համապատասխան:

Համայնքը ունի 234 տնտեսություն, 1345 բնակչություն և 870 ընտրող.

Ընդամենը 237.10 հա հողատարածք, որից 218 հա. գյուղ. նշանակության հողեր, որոնցից 2012 թ. չի մշակվել ընդամենը 5.0 հեկտար հողակտոր, որովհետև չեն կարողանում կատարել հողի մշակության աշխատանքները , ինչպես նաև քարքարոտ և հսկայական սալաքարերի պատճառով: Գյուղում բնակչությունը զբաղվում է հիմնականում հացահատիկի, բանջարանոցային կուլտուրաների՝ կարտոֆիլի, կաղամբի, պոմիդորի, վարունգի մշակությամբ, որից միայն 110.5 հա կարտոֆիլ, որի բերքը այս տարի դժվար է սպառվում և վաճառվում է ցածր գնով, որի պատճառով բնակչությունը վճարունակ չէ և չի կարողանում կատարել իրենց հարկային պարտավորությունները հողի հարկի գույքահարկի և ոռոգման ջրի հանդեպ:

Ըստ բնագավառների կատարվել են՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հողի հարկի գանձումը՝ 2012 թվականի հուլիսի 1-ի դրությամբ նախատեսված տարեկան 5.475.1դ /հինգ միլիոն չորս հարյուր յոթանասունհինգ հազար մեկ հարյուր / դ. դիմաց գանձվել է 296.6 դ /երկու հարյուր իննսունվեց հազար վեց հարյուր / դրամ

Գույքահարկ -1.600.0դ դիմաց գանձվել է 247.6 / երկու հարյուր քառասունյոթ հազար վեց հարյուր/ դ

Վարձակալական հողի հարկ – 86.0 դ դիմաց 40.2 / քառասուն հազար երկու հարյուր/ դ.

տեղական վճարներ - 190.0դ դիմաց 10.0 /տաս հազար/ դ., այլ ոչ հարկային եկամուտներ 10/տաս/ հ.դ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Աջակցել ենք զորահավաքի աշխատանքներին.

Գյուղում կազմակերպվել է մեծ միջոցառում՝ նվիրված Հայրենական Մեծ և Արցախյան պատերազմում զոհվածների հիշատակին և համայնքի 18 /տասնութ/ ազատամարտիկներին տրվել է դրամական օգնություն Հաղթանակի օրվա կապակցությամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Գյուղում մեծ թիվ են կազմում սոցիալապես անապահով ընտանիքները, ցածր եկամուտ ունեցողները և գործազուրկները, որոնց կտրամադրվի սոց. օգնություն:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Կատարվել է անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները, ցանքերի տարեկան հաշվետվության 4 ԳՏ ձևը և արդյունքները ներկայացվել վիճակագրական վարչություն:
Կատարվում է ամսական և եռամսակային ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում է մարզ-պետարան ու համապատասխան բաժիններ:
Մաքրվել է ներտնտեսային ոռոգման ցանցը, որը ապահովում է տնամերձ հողամասերի նորմալ և անկորուստ ջրամատակարարումը:
Աջակցել ենք գարնանացանի համար կարտոֆիլի, հացահատիկի սերմացույի, ինչպես նաև պարարտանյութի և դիզ. վառելանյութի ձեռք բերման աշխատանքներին:
Կազմակերպվում է կատարել 20.0 հա հացահատիկի հունձը:

ՄՇԱԿՈՒՅԹ , ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Պետական բյուջեի միջոցներով կառուցվել է դպրոցի երկրորդ մասնաշենքի տանիքը և արտաքին տեսքի վերականգնման ու հարդարման աշխատանքները :
Կատարվում է դպրոցի լոկալ ջեռուցման անցկացումը:
Համայնքն ունի հարուստ գրադարան , որից օգտվում են դպրոցականները և ուսանողները:
«Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության և համայնքի մասնակի ներդրման միջոցներով ամբողջովին վերանորոգվեց գրադարանը և ապահովվեց անհրաժեշտ գույքով և տեխնիկայով:
Նույն կազմակերպության և համայնքի մասնակի ներդրման միջոցով կառուցվել է խաղահրապարակը, որից օգտվում են համայնքի երեխաները:
Ունենք սպորտ հրապարակ, որտեղ կազմակերպվում են սպորտային խաղեր:

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հուշագիր է ստորագրվել Քաունթերփարթ Ինթերնեշնլ կազմակերպության հետ՝ իրականաց-նելու համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգման համար, որի աշխատանքները կսկսվեն հուլիսի 15-ից:
Համայնքում յուրաքանչյուր շաբաթ կատարվում է աղբաթափման աշխատանքները:
Բարեկարգվել են դաշտամիջյան ճանապարհները ավազահողային ծածկույթով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում:
2. Ոռոգման ցանցի մասնակի նորոգում:
3. Մշակույթի տան վերանորոգում:
4. Փողոցներում գիշերային լուսավորության անցկացում:
5. Գյուղ մտնող կենտրոնական փողոցի 1.5 կմ ասֆալտապատում
6. Գյուղ. մթերքների շուկայական ցածր գները և բերքի իրացման հետ կապված դժվարությունները

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

12. ՀՈՒԼԻՍԻ 2012 ԹՎԱԿԱՆ

Գ. ՇԻԱՇԱՆ